ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2020 թվականի №---Լ

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի №101Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների լիազորությունների, աշխատանքային պարտականությունների բաշխման կարգի, հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների և այլ աշխատակիցների գործառույթների սահմանման մասին» №101Լ որոշման №2 հավելվածի՝
   1) 3-րդ կետի 3-րդ ենթակետում «զարգացման ծրագրերի բաժնի մեջ չներառված այլ աշխատողներ» բառերը փոխարինել «սակագնային բաժին» բառերով.
   2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

      «8.Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, բաժինը՝ բաժնի պետը։ Հանձնաժողովի վարչությունների պետերի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրանց փոխարինում է բաժնի պետերից մեկը, իսկ բաժնի պետի բացակայության դեպքում՝ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը։».
   3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

      «16.Սակագնային քաղաքականության վարչությունը կազմված է զարգացման ծրագրերի և սակագնային բաժիններից։».
   4) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18.Սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գործառույթներն են՝»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք.Երևան
-- ---------- 2020թ.